# ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդը կամ Ծառզարդարը Հայ Առաքելական Եկեղեցու Տերունի տոներից է, որ մշտապես տոնվում է Զատկից մեկ շաբաթ առաջ: Տոնը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հանդիսավոր մուտքը (Մատթ. ԻԱ 1-11, Մարկ. ԺԱ 1-11, Ղուկ. ԺԹ 289-40), որը մեծ խանդավառություն է առաջ բերում ողջ ժողովրդի մեջ: Մարդկանց բազմությունները ձիթենու և արմավենու ճյուղերը ձեռքներին դիմավորում են Տիրոջը` իրենց զգեստները փռելով նրա ոտքերի տակ, աղաղակելով. "Ովսաննա Բարձրյալին, օրհնյալ լինի նա Ով գալիս է Տիրոջ անունով, օրհնյալ լինի մեր հոր` Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն երկնքում և փառք բարձունքներում" (Մարկ. ԺԱ 9-10):

Հնում, ոստերով և ձիթենու ճյուղերով դիմավորում էին այն թագավորներին, ովքեր պատերազմից հաղթանակած էին վերադառնում տուն: Այսպիսի պատիվ ընդունեց Քրիստոսն իր ժողովրդից, թեև ոչ մի մարմնական պատերազմում չէր հաղթել: Սակայն Քրիստոսը, իբրև թագավոր երկնքի և երկրի հաղթել էր մեղքի դեմ պատերազմում` մարդկանց ազատագրելով մեղքի իշխանությունից, որ մարդկությանը կրնկակոխ հետևում էր դրախտից վտարվելու պահից սկսյալ:

Չիթենու և դափնու պսակներով պատվում էին օլիմպիական խաղերում հաղթանակած մարզիկներին: Եվ հետևաբար ձիթենու և արմավենու ճյուղերի ընծայումը Քրիստոսին, Ով մեռյալ Ղազարոսին հարություն էր տվել, խորհրդանշում է Քրիստոսի իբրև ամբողջ արարչության թագավորի հաղթանակը մեղքի և մահվան հանդեպ:

Եկեղեցական մեկնիչները մեկնաբանելով Քրիստոսի ոտքերի առաջ ժողովրդի` իրենց հանդերձները փռելը, ասում են, որ այն խորհրդանշում է մեղքերի ծանրությունից թոթափվելը: Իսկ Քրիստոսն, իբրև Աստված և Տեր ամենայնի` աստվածային իր ոտքով տրորում է մարդկային մեղքերը` թողություն տալով մարդկանց:

Ծաղկազարդի նախօրեին, շաբաթ օրը կատարվում է նախատոնակ, որի ընթացքում բացվում է Սուրբ Սեղանի վարագույրը, որ ամբողջ Մեծ Պահքի ընթացքում փակ էր, խորհրդանշելով Մեծի Պահոց Շրջանին Երկնքի Արքայության դռների փակ լինելը մարդկանց առաջ: Հաջորդ օրը ժամերգությունից անմիջապես հետո մատուցվում է Սուրբ և Անմահ Պատարագ, որի ընթացքում օրհնվում են ժողովրդի կողմից եկեղեցի բերված ճյուղերը: Ծաղկազարդին տեղի են ունենում ժողովրդական մեծ տոնախմբություններ, ազգային երգ ու պարով, որը ծագումնաբանորեն չի առնչվում քրիստոնեության հետ, այլ առավելաբար կապված է հեթանոսական շրջանում գարնան գալուստը, բնության արթնացումը խորհրդանշող տոնի հետ: Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ նույնպես տեղի է ունեցել գարնան կարթոնքի շրջանում, իսկ ձիթենու և արմավենու ճյուղերի գործածության ավետարանական հիշատակությունը համընկել է ծառ զարդարելու և բնության ծաղկունքի ժողովրդական տոնակատարության հետ:

Ինչպես Ավետարանում ենք կարդում Քրիստոսն ավանակի վրա նստած մուտք գործեց Երուսաղեմ, որով ցույց տվեց իր մեծագույն խոնարհությունը, որ ուներ: Նա Ինքն Իրեն համեստորեն բացահայտեց ժողովրդին, ու մարգարեական ոգով այդ ժողովուրդը Հիսուսի անհատականության մեջ վզաց այն երկնավոր հկորությունը, որ Նա գերազանցապես քահանա էր ու արքա: Այն բոլոր հատկանիշները, որոնք Քրիստոսին էին վերագրում, դրանք այսօր ևս շարունակում են շարժել աշխարհը` հեզություն, խոնարհություն: Բայց նաև այն հզորությունը` հատուկ երկրավոր իշխողներին ու տերերին, որը իսկապես Հիսուսը կրում էր Իր մեջ, սակայն ի տարբերություն նրանցից շատերի, հիմնված միմիայն արդարության վրա, որն էլ տեսան ու հաստատեցին հավատացող աչքերը ու նրանց շուրթերը փառաբանեցին Նրան:

Քրիստոսն Երուսաղեմ մտնելուց առաջ բժշկություններ կատարեց, ու երբ եկավ` իբրև արքա, անմիջապես Տաճար բարձրացավ ու այնտեղ կարգ ու կանոն հաստատեց, ցույց տալով, թե Եկեղեցում ինչպես պետք է գործի մարգարեական ոգին ու շունչը, և թե յուրաքանչյուր հավատացյալ ինչպիսի գիտակցություն պետք է ունենա` իր տեղը պատկերացնելով Եկեղեցու մեջ:

# ՄԵԾ ԿԱՄ ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

*Զատկին նախորդող շաբաթը Ավագ կամ Մեծ է կոչվում այն պատճառով, որ մեկ ավանդում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի ամենակարևոր շրջանը` վերջին յոթ օրերի ուսուցումները, չարչարանքները, մահը և հարությունը: Այս շաբաթվա յուրաքանչյուր օր նույնպես կրում է "ավագ" անվանումը և իր այլաբանական խորհուրդն ունի:*

ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ - Անպտուղ թզենու չորացում:

Նվիրված է աշխարհի` երկնքի ու երկրի արարչագործությանը: Այս օրը մտաբերում ենք այն դեպքը, երբ Հիսուսի անեծքով չորացավ անպտուղ թզենին (Մատթ. 21 18-22, Մարկ. 11 12-14, 20-25), և Երուսաղեմի տաճարի մաքրագործումը (Մատթ. 21 12-17, Մարկ. 11 15-19, Ղուկ. 19 45-48, Հովհ. 2 13-22): Բեթանիայից Երուսաղեմ վերադառնալիս Հիսուսը քաղց է զգում: Ճանապարհի վրա մի թզենի տեսնելով` մոտենում է և նրա վրա տերևից բացի ոչինչ չգտնելով` թզենուն ասում է. "Այսուհետև քեզնից հավիտյան պտուղ թող չլինի": Նույն պահին թզենին չորանում է: Հիսուսն անիծելով տերևներով զարդարված, բայց անպտուղ թզենուն` փարիսեցիներին էր ակնարկում, ովքեր արտաքին բարեպաշտությամբ էին զարդարված, սակայն չունեին այդ բարեպաշտության հոգևոր պտուղը` բարի գործերը և ողորմությունը:

Պտուղը խորհրդանշում է մարդկային բարի գործերն ու առաքինությունները, որոնցից զուրկ մարդը կպատժվի այս թզենու օրինակով՞ Ինչպես ասում է Հակոբոս առաքյալը` "Հավատքն առանց գործերի մեռած է":

Երուսաղեմի Տաճարի մաքրագործումը կատարվեց ի խնդիր հավատի մաքրության: Հիսուսը մտավ տաճար և շրջելով աղավնեվաճառների ու լումայափոխների սեղանները` դուրս հանեց նրանց, ովքեր տաճարի մեջ առևտուր էին անում: Եվ ասաց. "Գրված է, իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք այն դարձրել" (Եսայի 56 7, Երեմ. 7 11): Աստծու տաճարը աղոթքի և պաշտամունքի տուն է, և չի կարելի առքուվաճառքի տեղ դարձնել: Իր այս արարքով Տերը մեզ սովորեցնում է սրբությունների հանդեպ պատշաճ վերաբերմունք ցուցաբերել:

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ - Տասը կույսերի առակը:

Ավագ երեքշաբթին նվիրված է "Տասը կույսերի" առակին (Մատթ. 25 1-13): Տասը կույսեր, իրենց լապտերներն առած, փեսային ու հարսին դիմավորելու դուրս եկան: Նրանցից հինգը հիմար էին, իսկ հինգը` իմաստուն: Հիմարները լապտերները վերցրին, բայց իրենց հետ բավարար ձեթ չվերցրին: Իսկ իմաստուն կույսերն իրենց հետ ամաններով վերցրին բավարար ձեթի պաշար: Փեսան ուշանում էր, ուստի կույսերը քուն մտան: Կեսգիշերին ձայն լսվեց. "Ահա փեսան եկավ": Իմաստուն կույսերը պատրաստ էին պահել իրենց լապտերները և փեսայի հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակվեց: Բայց մինչ այդ հիմար կույսերը իմաստուններից ձեթ էին խնդրել իրենց մարող ճրագների համար, սակայն ստացել էին հետևյալ պատասխանը. "Գուցե մեր ձեթը մեզ և ձեզ չբավարարի. գնացեք վաճառողի մոտ և ձեզ համար գնեցեք": Հիմար կույսերն այդպես վարվեցին, սակայն վերադառնալով` իրենց առաջ հարսանիքի սրահի դուռը փակ գտան և կանչեցին. "Տե՛ր, Տե՛ր, բաց արա": Բայց փեսան պատասխան տվեց. "Ճշմարիտ եմ ասում ձեզ, ձեզ չեմ ճանաչում": Այս առակը խորհրդաբանական իմաստներ ունի. Փեսան Քրիստոսն է, և հարսանիքի սրահը` երկնքի արքայությունը, որին արժանանում են հինգ իմաստուն կույսերը, ովքեր ժամանակին բավարար չափով ձեթով, այսինքն` ողորմության բարի գործերով են լցնում իրենց լապտերները:

Ավագ երեքշաբթին մի ներքին ընդհանրությամբ կապված է նախորդ օրվա հետ. ակնարկում է, որ մեր առաքինի գործերի պտուղներով հոգեպես պետք է պատրաստ լինենք Քրիստոսի երկրորդ գալստյանը, այլապես կչորանանք թզենու պես և երկնային արքայությունից դուրս կմնանք հիմար կույսերի նման:

Ավագ երեքշաբթի, երեկոյան ժամերգության ընթացքում, եկեղեցու ատյան են դուրս գալիս տասը մանուկներ` խորհրդանշելով տասը կույսերին և իրենց ձեռքին պահելով մոմեր` հինգը վառվող, իսկ հինգը` հանգած: Մանուկների ձեռքը վառվող մոմ են տալիս, որը խորհրդանշում է հավատքի լույսը, Աստծու պատվիրաններն աչքի առաջ ունենալը և գործելը` ըստ այս խոսքի. "Քո խոսքերը ճրագ են իմ ոտքերի համար":

Օրվա ավետարանական պատգամն է. "Արթուն կացեք, որովհետև չգիտեք Տիրոջ գալստյան և ձեր բարի կամ չար գործերի քննության ոչ օրը և ոչ էլ ժամը":

ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ - Օծում և մատնություն:

Այսօր հիշատակում ենք այն մեղավոր կնոջը, ով թանկագին յուղով օծեց Քրիստոսի գլուխը, ինչը խորհրդանշեց Տիրոջ մոտալուտ մահը: Առաքյալները մեղադրեցին այդ կնոջը` յուղը վատնելու համար. "Կարելի էր մեծ գնով վաճառել այդ և տալ աղքատներին": Հիսուսը նրանց ասաց. "Ինչո՞ւ եք նեղություն տալիս այդ կնոջը. նա Իմ հանդեպ մի բարի գործ կատարեց. աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք, բայց ինձ միշտ ձեզ հետ չեք ունենա: Իմ մարմնի վրա այդ յուղը թափելով` նա Իմ թաղվելը կանխանշեց: Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին, նաև ինչ որ դա արեց" (Մատթ. 26 6-13, Մարկ. 14, 39, Հովհ. 12 1-11): Օծման այդ դեպքին հաջորդեց Հուդայի` Հիսուսին մատնելու վճիռը. "Այն ժամանակ Տասներկուսից մեկը` Հուդա Իսկարիովտացի կոչվածը, գնաց քահանայապետի մոտ ու ասաց. "Ի՞նչ կկամենայիք ինձ տալ, որ ես նրան ձեզ մատնեմ": Եվ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան նրան" (Մատթ. 26 14):

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ - Վերջին ընթրիքը` Հաղորդության խորհրդի հաստատում, Ոտնլվա:

Առավոտյան մատուցվում է սուրբ Պատարագ` ի հիշատակ վերջին ընթրիքի ժամանակ Հաղորդության խորհրդի հաստատման, երբ Հիսուս Քրիստոսը վերնատանը վերցրեց հացը, օրհնեց, կտրեց և տվեց տասներկու աշակերտներին ու ասաց. "Առեք, կերեք, այս է Իմ մարմինը": Ապա բաժակ վերցնելով` գոհություն հայտնեց, տվեց նրանց և ասաց. "Խմեցեք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր ուխտի Իմ արյունը, որ թափվում է շատերի համար" (Մատթ. 26 17-30, Մարկ. 14 12-26, Ղուկ. 22 7-14, 21-23, Հովհ. 13 21-30): Պատարագը իմաստավորվում է մարդկանց փրկության համար Քրիստոսի կոհաբերությամբ` խաչվելով, Իր արյունը հեղելով և Հաղորդության խորհրդի կատարումով, որը սուրբ Սեղանի վրա օրհնված և պատարագված հացն ու գինին են: Դրանք Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունն են և հոգևոր սնունդ` հավատացյալների համար. "Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ Արյունը, հավիտենական կյանք ունի" (Հովհ. 6 55):

ՈՏՆԼՎԱ: Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվում է Ոտնլվայի արարողությունը: Վերջին ընթրիքից հետո Հիսուսը ջուրը լցրեց կոնքի մեջ, ծունկի եկավ Իր աշակերտների առջև ու ծառայաբար լվաց նրանց ոտքերը` սրբելով մեջքին կապված սրբիչով (Հովհ. 13 5)` հեզության ու խոնարհության օրինակ ծառայելով: "Եթե Ես` Տերս և Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ, որովհետև մի օրինակ տվի ձեզ, որ ինչպես Ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք" (Հովհ. 13 1-20):

Եպիսկոպոսը կամ քահանան տասներկու մանուկների կամ եկեղեցու սպասավորների հետ բարձրանում է խորան: Հոգևորականը խաչով ու Ավետարանով և "Թող օրհնվեն ու սրբագործվեն այս յուղն ու ջուրը" խոսքերով օրհնում է խորանում դրված ջուրը և յուղը: Աղոթքից հետո հոգևորականը վերցնում է սրբիչը, ծունկի գալիս և լվանում տասներկուսի ոտքերը և յուղով օծում: *Արարողության վերջում կարդացվում է Ավետարան:*

Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվում է մի արարողություն, որը "Խավարում" է կոչվում:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ - Տիրոջ խաչելությունը և թաղումը:

Եկեղեցին հիշատակում է Հիսուս Քրիստոսի չարչարանքներն ու խաչելությունը (Մատթ. 27 32-44, Մարկ. 15 21-32, Ղուկ. 23 26-43, Հովհ. 18 17-27): Գեթսեմանիի այգում Հուդայի առաջնորդությամբ հռոմեացի զինվորները ձերբակալում են Հիսուսին: Այս պահից սկսվում են Նրա չարչարանքները, որոնց հիշատակությունները Եկեղեցին սրբագործել է պատշաճ արարողություններով: Հիսուս Քրիստոսը հանձնվում է մեղավորների ձեռքը և դատապարտվում մահվան:

ԽԱՎԱՐՈՒՄ: Խաչելությունից առաջ Տիրոջ գլխին փշե պսակ դրեցին, ծաղրեցին, անարգեցին, ապա խաչեցին, ծարավը հագեցնելու համար ջրի փոխարեն լեղի տվեցին ու մեռնելուց հետո էլ տեգով խոցեցին: Քրիստոսն այս բոլոր չարչարանքները հանձն առավ և խաչափայտի վրա հոգին ավանդեց` մարդկության փրկության և մեղքերի քավության համար: Արարողության ժամանակ խորանի վրա վառված են տասներկու հավասարաչափ մոմեր և մեկ հատ մեծ` նրանց միջև: "Խավարման" ընթացքում ավետարաններից կարդացվում են յոթ հատվածներ, որոնք բովանդակում են Հիսուսի` ամբոխի ձեռքը հանձնվելը, անարգվելը և Պետրոսի երեք անգամ ուրանալն ու կղջալը: Ավետարանական ընթերցումներն ընդմիջվում են սաղմոսների ընթերցանությամբ և Ներսես Շնորհալու հեղինակած շարականներով: Ամեն ընթերցումից հետո հանգցնում են տասներկու մոմերից երկուսը` յուրաքանչյուր կողմից մեկական, վերջում մնում է մեջտեղի մեծ մոմը: Եվս մի շարականից հետո հանգցնում են եկեղեցու բոլոր լույսերը, և երգվում է "Փառք ի բարձունս"-ը, որն առաջին անգամ ասել են հովիվները. "Փառք Աստծուն բարձունքներում, երկրի վրա` խաղաղություն, և հաճություն` մարդկանց մեջ" (Ղուկ. 2 14): Այս երգի վերջին խոսքերից "Ծագեա"-ի ժամանակ դարձյալ վառում են լույսերը: Մոմերը հանգցնելը խորհրդանշում է աշակերտների թողնելը և փախչելը, իսկ մեջտեղի մոմը խորհրդանշում է Քրիստոսին, Ով մնացել էր միայնակ:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ- Դժոխքի ավերում, Ճրագալույցի պատարագ:

Ավագ շաբաթ օրը նվիրված է Հիսուսի թաղմանը (Մատթ. 27 57-61, Մարկ. 15 42-47, Ղուկ. 23 50-56, Հովհ. 19 38-42) և գերեզմանի կնքմանը (Մատթ. 27 62-66) Քրիստոսը Հովսեփ Արիմաթացու ձեռքով իջեցվում է խաչափայտից (Մատթ. 27 57-60), փաթաթվում պատանքով ու դրվում վիմափոր գերեզմանի մեջ: Գերեզմանի մուտքը փակում են մի մեծ քարով: Եվ քանի որ ըստ հրեական օրենքի հանգստի ժամանակ էր, աշակերտները հեռանում են գերեզմանից այն հույսով, որ հաջորդ օրը կվերադառնան, կխնկարկեն ու կօծեն Հիսուսի մարմինը. "Եվ օրը ուրբաթ էր, ու լուսանում էր շաբաթը" (Ղուկ. 24 54): Հիսուսը երրորդ օրը հարություն է առնում, ինչպես Ինքն էր մարգարեացել Իր մասին (Մատթ. 20 19): Քրիստոսը գերեզման դրվելով` իջնում է դժոխք և ավերում այն` փրկություն շնորհելով արդարների հոգիներին, ինչպես ուսուցանում է մեր Եկեղեցու վարդապետությունը:

Շաբաթ երեկոյան կատարվում է Ճրագալույցի (ճրագը վառելու) պատարագ: Հնում ամեն կիրակի երեկոյան ձեթ էին լցնում կանթեղների մեջ և վառում: Հետագայում, սակայն, ճրագալույց սկսեցին անվանել երեկոյան պատարագը, որը մեր Եկեղեցում կատարվում է բացառապես Ծննդյան և Հարության տոներին նախորդող օրվա երեկոյան: Զատկի` Սուրբ Հարության տոնի ճրագալույցի պատարագի ժամանակ, երբ տրվում է Քրիստոսի Հարության ավետիսը, այս ավետիսով ավարտվում է Մեծ պահքը: